

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՀՐՅՐԵՆԻ ԵԶԵՐՔՆ ԻԲՐԵԻ ԸՊԸՍՏԸՆ

II.

Թումանեանը թարգմանել է Բայբլինի «Շիլիոնի կալանաւորը», որի մէջ որոշ հատւածների հոգեբանական բովանդակութիւնը լոյս է սփռում մեր առաջադիր խնդրի վրայ, այսինքն թէ ինչ ենք հասկանում «հայրենի եզերքն իրրե ապաստան» բառերի տակ:

«Կալանաւորը» բանասում ունէր հարազատների մի փոքրիկ շրջան. շղթայի զարկուած իւր եզրայրներն էին դրանք, որոնք ապրում էին բոլորը միասին՝ շնչելով նոյն օդը, ապրելով նման տենչերով ու յոյսերով: Բայց արդելարանի դաժան պայմանները մէկիկ մէկիկ մեծցնում են բոլորին՝ թողնելով միայն մէկին — «կալանաւորին», որի համար ամբողջ աշխարհը դառնում է մի սև, տանջալի անապատ, երբ դրկւում է պաշտամունքի առարկայ դարձրած սիրելիներից: Ահա թէ ինչ է ասում նա՝ իւր եզրայրներին թաղելուց յետոյ:

Ես թաղել էի արդէն բոլորին,

Եւ այնուհետեւ աշխարհն ինձ համար

Մի բանտ էր նոյնպէս, բայց մեծ ու անծայր:

Էլ ոչ ոք չկար այնտեղ ինձ մօտիկ.

Հայր, մայր կամ եզրայր, ընկեր կամ որդիք...

«Կալանաւորն» այնքան է սուփորում իւր բանտին, նա այնքան յիշողութիւններով է կապւում նրա հետ, որ այլևս նրանից անջատւել չի ուզում, մինչև անգամ այն մամանակ, երբ ուզում են ձգել նրա կապանքը, տալ ազատութիւն:

Շատ քիչ հայ բանաստեղծների է յաջողւում թարգմանել օտար գրականութիւնից այնպիսի երգեր, որոնք հարազատ լինէին նրանց ստեղծագործութեանը, այսինքն թարգմանական տողերը նրանց դրչի տակից դուրս ելնէին իրրե ինքնուրոյն, ինքնարուղիս և սեպհակուն ստեղծագործութիւն: Յովհ, Թումանեանը պատկանում է բազմաւոր քացատութիւնների թուին: Այն բոլոր թարգմանութիւնները, որ նա արել է, մի դարձանալի զուգադիպութեամբ՝ թարգման են հանդիսանում նրա զգացումներին ու յոյզերին:

Այդպէս է նաև Լերմոնտովի «Մծիրին» որի ամբողջ հիւսուածքը շնչուած է հայրենի եզերքի կարօտով, որ այնքան ներդաշնակ է

և համահարազատ մեր բանաստեղծի հիմնական ապրումների հոգուն։
Ահա թէ ինչ խոստովանութիւն է անում երիտասարդ անապա-
տականը.

Ես տեսնում էի, որ ուրիշներին
Հայրենիք, տուն, ընկեր, ծնող ունէին,
Մինչդեռ չունէի ես նրանց նման
Ոչ թէ սիրելիք—այլ և գերեզման
Ես էլ այն օրից իզուր շողբացի,
Այլ հոգուս միջում այսպէս ուխտեցի,
Որ երբ և իցէ, թէկուզ մի վայրկեան,
Այս իմ բոցավառ կուրծքը մանկական
Սեղմեմ կարօտով մի ուրիշ կրծքի,
Թէկուզ անծանօթ—միայն հարազատի:

Հայրենի եզերքի կարօտով ներշնչւած էակի համար ամբողջ
տիեզերքը նման ցաւով և ցանկութեամբ լեցուն է պատկերանում։
Նա ոգի է տալիս ամեն ինչի իւր շուրջը և խորապէս զգում, որ
բոլորը, բոլորը միայն մի վիշտ են ցնորեցնելու շափ ուժգնապէս
փայփայում—հանգիստ գտնել հայրենի եզերքին՝ հարազատների
չրջանում, սիրած բնութեան գոգի մէջ...

Ուր թարմ է օդը, և ուր մերթ գալիս
Ու բարձր պատի խորունկ ձեղքուածքում,
Բուքից վախեցած, կուշ եկած նստում,
Պատասպարւում է փոքրիկ աղաւնին—
Չքնաղ դաւակը անյայտ աշխարհի:

Մեր բանաստեղծն ևս վախեցած է կեանքի բուքից, նա ևս
կամենում է պատասպարան գտնել փոքրիկ աղաւնու պէս՝ իւր ան-
յայտ աշխարհի տենչերը յագեցնելու համար:

Երիտասարդ անապատականի ձգտումն ունի և Յովհ. Թու-
մանեանը, սա ևս ապաստան է ուզում գտնել, ասելով.

Այս իսաւար, ճնշող, ցուրտ մթնոլորտում
Հանգիստ չեն, ընկեր, նաև իմ հոգում
Իմ վեճ ցնորքներն, իմ տենչերն աննենգ,
Նոյնպէս հալածւած նրանք էլ երբէք
Չեն կարողանում գտնել ապաստան,
Երկրնքի ցըրւած ամպերի նման:

Խնդիրն այժմ այն է, թէ որն է «իսաւար, ճնշող, ցուրտ մթ-
նոլորտը», օրից դուրս ելնել է ուզում բանաստեղծը և ուր է նա
գնում, որտեղ պիտի գտնի ապաստան:

Բաւական լոյս կարող է սփռել այդ խնդրի վրայ մի շատ բնորոշ հանգամանք. այդ այն է, թէ որտեղից է նիւթ հաւաքում Յովհ. Թումանեանը իւր ստեղծագործութեան համար:

Բանաստեղծական ստեղծագործութեան մասին տարածուած թիւր հասկացողութիւններից մէկն էլ այն է, որ ամեն ինչ կրկնքի հետ է կապում, պնդելով, որ բանաստեղծ-հերոսն ամեն բան անում է վերին ներշնչման միջոցով: Յամառ, տախուս աշխատանքի կարիք չկայ, քանի որ ձիրքը իբրև մի կրկնատուր աղբիւր բղխում է առանց այլևայլութեան: Դա սխալ և մտադածին կարծիք է, որի հերքումը տալիս է հէնց ինքը, բանաստեղծ Թումանեանի ամբողջ ստեղծագործութիւնը, յայտնագործելով մի կրկնատու, քրանաջան և բեղմնաւոր աշխատանքի գոյութիւնը: Երկար ու բարակ ուսում-նասիրութիւնների, անօրեայ կեանքի լաւապէս իմացման արդիւնք է մեր բանաստեղծի Մուսան Շատ պարզ է, որ այդպէս էլ պիտի լինի, որովհետև անձանօք ապրումներն ու հոգիները նիւթ չեն կարող լինել գեղագէտի ստեղծագործութեան համար: Այդ նկատումով ճիշտ է այն դարձուածքը, որ պնդում է, թէ, որքան բարձր է մի բանաստեղծական կրկն, այնքան էլ նա ինքնակենսագրական է: Նախ քան բուն ստեղծագործութիւնը, իւրաքանչիւր գեղագէտ ապրում է որոշ տեսակի տանջանքներ, որոնք գլխաւորապէս ծագում են նիւթի մշակման, հոգեբանական հետազոտման սահմաններում, և միայն յետոյ ստեղծագործողի հոգին խաղաղութիւն է ստանում ստեղծագործութեան ժամին: Թող կոպիտ օրինակ չըհամարուի, եթէ ասելու լինենք, թէ պարողը նախ քան գեղարուեստական հաճոյք զգալը իւր պարից և ուրիշներին զմայլեցնելը, ստիպուած է հոգեկան ու բնախօսական բաղմաթիւ շարշարանքներ ապրել...

Յովհ. Թումանեանը վաղուց ի վեր յայտարարել է, որ ինքը ժողովրդական բանահիւսութեան անդիր մնացորդները սիրով կընդունի, ով որ էլ հաղորդելու լինի իրեն: Բայց նախ քան այդ յայտարարումը, հայրենի կղերքին նուիրուած նրա ստեղծագործութեան իւրաքանչիւր տողը ցոյց է տալիս, որ անձամբ հաւաքել, մշակել և ուսումնասիրել է ժողովրդի բանաւոր գրականութիւնը, նրա անօրեայ նիստ ու կացը:

Ժողովրդական ստեղծագործութեան մթնոլորտը այն չափով, ինչ չափով նա դարձել է մեր բանաստեղծի կրկնքի նիւթ, երբէք չի կարելի անուանել այն «խաւար, ճնշող, ցուրտ մթնոլորտ», որի մասին գանդատուում է մեր բանաստեղծը: Այդտեղ նա գտնում է իրենց տանը, անբռնադատ կերպով արտայայտում է իւր համակրանքներն ու հակակրանքները: Սիրով և խնդութեամբ է առգորուած նրա քնարը և բանաստեղծը զգում է իրեն կրճանկութեան

զազաթին կանդնած: Ի՞նչ լաւ, ի՞նչ գեղեցիկ է այստեղ, որքան բուրեան և ցօղաւէտ են այստեղի ծաղիկները, ի՞նչ բախտաւորութիւն միշտ շնչել այս օդը, ապրել այս մարդկանց շրջանում—կարծես թէ տկամայ դուրս է գալիս նրա բերանից այսպիսի խօսքեր, երբ նա գորնում է իւր քնարի այն լարերին, որոնք արձակում են հայրենանուազ հնչիւններ:

«Սաւար ճնշող և ցուրտ մթնոլորտը» պէտք է փնտրել ուրիշ տեղ: Դա բանաստեղծի ստեղծագործութեան այն մասն է, որի մէջ ինքն զգում է իրեն միանդամայն դրկուած հայրենի եղերքից, այն լաւ և գեղեցիկ «տալաւորութիւններից, այն բուրեան և ցօղաւէտ ծաղիկներից, այն բախտաւորութիւն շնչող օդից, համամիտ և համազգաց մարդկանց շրջապատից»:

Դա կեանքի այն բուքն է, որից փախչում է բանաստեղծը հանգստութեան տպաստան դանելու դիտաւորութեամբ:

Կեանքի բուքը մեջշանտկան միջավայրն է, որի մէջ ազատօրէն և խաղաղօրէն շնչել չի կարողանում Յովն. Թումանեանը: Դա քաղաքն է իւր փողի և բոնի գործակցութեան պաշտամունքով, բնութեան հրաշալիքներից թափուր և արճեստական քաղաքակրթութեան սրբան: Համակրանքի և ազատ գործակցութեան թելերով նա չի կարողանում կցորդուել մեջշանտկան մթնոլորտի հետ, չի յաջողում փայփայել, գուրգուրել նրա արժէքները, որոնցից բուրում է մեր բանաստեղծի համար սուկ սառնութիւն և անտարբերութիւն, իսկ ինքն իւր հերթին տածում է նողկանքի և գարշանքի զգացումներ, որ ցայտուն արտայայտել է այրիչ երգիծանքով: Եւ բնական է, որ այդտեղ նա պիտի տառապի սեպհական շրջապատից դուրս մնացած մարդու դաւերով, անընդունակ լինելով հաշտուել իւր կողմից շարուած կենսական երևոյթների հետ: Ահա թէ ուր պիտի որոնել «խաւար, ճնշող և ցուրտ մթնոլորտը», որի օրհներգը պրօզայիկ տողերով շարել է մեր բանաստեղծը.

Փողի քանկը, փողի քանկը,

Բարձրացնում է մարդու հասակը,

Գեղեցկացնում է հրէշ տգեղին,

Սրբագործում է գարշն ու աղտեղին:

Ներրա սյժն է՝ որ դարձնում է լսկ

Անասուններին յարգի ու խելօք,

Կոյսին, զառամին մօտեցնում իրար,

Չարին, փախաուին շինում բարերար,

Պրճնում ճակատը լիրբ աւաղակի,

Կանդնեցնում արձան անվախճան փառքի:

Նա է միշտ շարժում դատողի լեզուն,

Նա է հասցընում աղօթքն Աստուծոն,
 Նրա վրայ է աշխարհքը կանգնած,
 Նա է մեր հողին, մեր երկրորդ Ասուած...

Այս երկար հատուածը մէջ բերինք զայն տալու համար, թէ ինչի դէմ է գարշանք յայանում Յովհ. Քումանեանը, ինչից է զըզուում և այդ բոլորից հետո՝ որակ է ուզում ապաստան գանել, բայիսի վայրը կլինի այնուհետև նրա հայրենի եզերքը: Վերի տողերի մէջ մեշշանական ամբողջ հասարակարդն է պատկերացուած իւր բացասական յատկութիւններով: Փողը մեծ ոյժ է—անն նրա հակիրճ բանաձևը. փողը իշխում է ամուսնական կեանքում, տիրապետում է «իդէօլօգիայի» մէջ՝ վաճառքի հանելով ամեն մի սրբութիւն: Փողն է բոլոր մտաւոր և բարոյական արժէքների շափը... Քող այդպէս լինի, բայց մեր բանաստեղծը հետու է փախչում այն բնագաւառից, որի իշխանապետն է այդ արժէքների արժէքը, նա ոգևորում է այն միջավայրով, ուր այդ իշխանապետը գոյութիւն չունի և բոլոր ընկերական յարաբերութիւնները զօղուած են այլ տարրերով, դա նահապետական մաքուր կենդանին է իւր հովուերգական կենսահայեցողութեամբ և աշխարհիմացութեամբ: Այդտեղ է գանում մեր բանաստեղծը իւր ապաստանը՝ փախչելով «խաւար, ճնշող և ցուրտ մթնոլորտից»—մեշշանական փողապաշտ իրականութիւնից, որի մէջ նա ապրում է առանց կարողանալու սկրել նրան:

Ռուս վիպագիր Տուրգենևի հոգեկան համակրանքների մի բնորոշ կողմը կարող է մասամբ լոյս ունել այս ինչորի վրայ: Արքան էլ մենք տրամադիր լինինք նրան համարելու խոշոր ներկայացուցիչ տիպականորէն պատկերացնող արևեստի, այնուամենայնիւ ճիշտ է, որ նա էլ մեշշանական միջավայրի մէջ իրեն հարազատ մասնիկ չէր համարում և իւր հոգեկան համակրանքներն ուղղած էր դէպի այն միջավայրը, այն հայրենի եզերքը, որին ինքը պատկանում էր իւր բնախօսական և հոգեբանական ամբողջ էութեամբ: Նա ևս իրեն համարում էր բուքի և փոթորկի մասնուած թռչնակի վիճակում, նա ևս որոնում էր ապաստան հանդստանալու համար, և այդ ապաստանը գանում էր Ռուդինների և Լավրեյկիների աշխարհում: Մինչև կեանքի վերջը Տուրգենևը հարազատ, հոգեկից, համազգաց և համամիտ մարդկանց շրջան էր որոնում և իւր այդ որոնումներին երբեմն տալիս էր խորը բանաստեղծական բնօյժ, օրինակ, «Աղաւնիներ» գեղեցիկ արձակ բանաստեղծութեան մէջ: Մենք տեսանք, որ Լերմոնտովի «բուքից վախեցած փոքրիկ աղաւնին» պատասպարուելու տեղ ունէր քարձր պատի խորունկ ձեղքուածքում: Տուրգենևի աղաւնիներն ևս, սպիտակ իւրև ձիւնի երկու քուլայ, հաւասար թռիչքով տուն են բաշում այն ժամանակ, երբ փոթորկն էր իշխում և սկսուած էր տարերքի ազմկալից

խաղը: Բուքից վախեցած փոքրիկ աղանիները պատսպարուում են կտուրի ծածկի տակ, երգիկի հէնց ծայրին: Վերկուսն էլ մէջքերն ունցրել են, —ասում է Տուրգեններ, — և ամէն մէկն իր փոքրիկ թևով զգում է դրացու թևի մեղմ շփումը... Բախտաւոր են նրանք: Նրանց նայելով՝ ևս էլ ինձ բախտաւոր ևս զգում... թէև ևս մենակ ևս... մէն-մենակ, ինչպէս և միշտ:

Խորունկ թախծի այս արտայայտութիւնը համապատասխանում է Յովհ, Թումանեանի այն բոլոր երգերի ոգուն, երբ նա զգում է իրեն մէն-մենակ... մեշչանական միջավայրի սահմաններում, բայց այդ թախծը միանգամայն անհետանում է, երբ նա թևակոխում է իւր հայրենի եզերքը և նրա մէջ խօսել է սկսում յուսանութեան փոխարէն մի կենսախինդ և ծիծղուն լաւատեսութիւն:

Ի՞նչ հիմք ունի այդ լաւատեսութիւնը:

Լաւատեսութեան ամեն մի արտայայտութիւն հետեանք է անմահութեան ձգտումի այս կամ այն ձևակերպութեան: Հոգու լայնացումն ընդարձակ շրջապատի ընդգրկումով տանում է դէպի անհունութիւն թէ ըստ տարածութեան և թէ ըստ ժամանակի: Անհատ մնալով հանդերձ զգալ իրեն իրրե ամբապինդ օղակով կապուած մի մեծ ամբողջի հետ, սեպհական էութիւնը լուծել, անէացնել աւելի խոշոր յատկութիւններով յետ ստանալու նպատակով, իւր մէջ պարփակել երկինք ու երկիր մի հաւաքական կեցութեան սահմաններում — այդ բոլորն աղբիւր է հանդիսանում կենսախինդ և լաւատես հոգեկան վիճակի: Իւր անհատական գոյութեան վախճանից յետոյ հետք թողնելու բուռն ձգտումը հոգեբանօրէն բըղխում է այգօրինակ վիճակից: Որեւէ հանրական ամբողջի մէջ իրեն շղգալը, «կարուած կեանքի ամեն կապերից» ապրումն անհրաժեշտօրէն տանում է դէպի սահմանափակում անհունութեան, որ նոյնն է թէ անցողիկութեան անմահութեան ձգտումի հանդէպ: Ուժգնութեան այն թափով, ինչ թափով Յովհ, Թումանեանը կտրուած է համարում իրեն մեշչանական հասարակարգից և անգոսնում է նրա բոլոր արժէքները — այդ նոյն շափով նա իրեն համարում է անվերադարձ կտրուած մասնուած մի էակ: Այն բոլոր երգերը, որոնք ներշնչուած են հայրենազրկութեան ոգով, ցայտուն կերպով ցոյց են տալիս, որ նա հետու է հայրենի եզերքի անմահութիւն և անհունութիւն բերող հոգեպարար կենսահայեցողութիւնից:

Այն բոլոր ապրումները, որոնք թաթախուած են բանաստեղծի վէճերով բնութեան յաւէրժութեան և անհունութեան դէմ, մի սեյուսահատութեան դրոշմ են կրում հայրենազրկութեան նուազների մէջ:

Մինը ասաւ, — Բայց կը ծաղկի
Էն հովիտը նորից նոր:

Միւսը այստեղ ոչինչ չասաւ.

Ու գնում էր գլխիկոր...

Բանաստեղծի կեանքն ու հին տարին (ժամանակը) գրոյց են անում՝ գնալով «դէպի աշխարհն յաւէրժական», պարասթիւնը՝ թախծի շեշտով՝ բանաստեղծի կողմն է մնում:

Սակայն հայրենի եզերքի նուագներում լաւատեսութեան ապրումն իրրե վերադարձի յոյս, համակուելով անհունութեան հնարաւորութեամբ հաւաքական ամբողջի սահմաններում, ապիս է գեղեցիկ արտայայտութիւններ. երկինք և երկիր սիրահարուած են.

Երկինքը հազար աչքերով ժպտում,

Եւ գաղտնի սիրոյ համբոյր է ապի.

Եւ իրար համար երգեր են ասում,

Իրար փաշտոյցում, գգում, արտասւում,

Ինչպէս կենդանի, զգայուն մարդիկ...

Եւ բանաստեղծը ախրում է սաստիկ,

Նախանձում է նա, թէ ինչու չունի

Ինքն էլ այնպիսի մի վեճ սիրուհի:

Ինչ վերաբերում է Յովհ. Թումանեանին, նա տիրելու առիթ չունի հայրենի եզերքին նուիրուած իւր գրուածութիւնների մէջ. Հէնց այդ հայրենի եզերքն է նրա բաղձալի «վեճ սիրուհին», որի մէջ անմահանում է և որին անմահացնում է ինքը բանաստեղծը:

Սյնտեղ, ուր նրա ներշնչումը տողորուած է հայրենի եզերքի սիրով, մահուան երկիւզը վերանում է մէջակողից, խօսում է բարոյագէտ անմահանալու, խրայինների սրտի և մաքի մէջ յաւէրժանալու բուռն ձգտումը, այդտեղ է, որ հնչում է բանաստեղծի կենսասխիւնդ և ծիծղուն լաւատեսութիւնը, ստիպուած չլինելով լուս և գլխիկոր գլուխ իջնել բնութեան անհունութեան— յաւէրժութեան առջև.

Անց են կենում սէր ու խնդում,

Քեզ կցկութիւն, գանձ ու գան,

Մահը մերն է, մենք մահինը,

Մարդու գործն է միշտ անմահ...

Երնէկ նրան, որ իր գոլ ծով

Կապրի անվերջ, անդադար:

Մեշտանական միջավայրի սահմաններում բանաստեղծը կարծես թէ բաց և դիւրազգաց նեարդերի մի դանդում է ներկայանում. նա ամեն ինչ իւր սրտին մօտ է ասնում, ամենուրեք փնտրում է կեանքի սե կողմերը, վշտանում և վշտացնում ուրիշներին: Դա մե-

նաւոր մարդու, ինքն իւր «անհատական հարցերի» մէջ խրուած հոգու մաղձատութիւնն է, որ այնքան անհամբերու է, նեշտ գրգռուող և յտեսանայ Սակայն հայրենի եղերքը կազդուրիչ շունչ ունի, համակիրներն և սիրելիներն միմեայրորդը բուժում է, և յտեսանութիւնն իրրև մի անցողիկ ապրում կրդող բանաստեղծը հնչեցնում է իւր դարձնումի նուազները՝ բանի տեղ չդնելով այն հիասթափութիւնն, որ ծնում է սիրոյ և խնդումի, գեղեցկութեան, գանձի և գանձի կղծելի և անյարասան լինելը: Այդ հիասթափութիւնը մաշում է, դառնում ատանջանք է պատճառում ինքնախորատուզման դէպքում, այն ինչ հոգեկան լայն ընդգրկումները, իւր անհատական ետի անվերապահ ձուլումը մի մեծ ամբողջի մէջ՝ որ և է գործով անվերջ ու անդադար ապրելու ձգտումներով — այդ բոլորը նոր սոյի և եռանդ են բերում բանաստեղծին, յտեսանութիւնը տեղի է ապրիս լաւատեսութեան, անապատան մարդու կրկրուն վիճակը փոխւում է հաստատ ապաստան ունեցողի զուարթութեան հանդէպ՝ փարկելով մի կռանդատ համոզումի — «մարդու գործն է միշտ անտան»:

Այդ անտանութեան բարձրագոյն նուազն է Յովն. Թումանեանի «Դէպի անտունը», որ յոյց է ապրիս թէ բանաստեղծը ապաստան գտնելուց յետոյ այլևս ինչ ձգտումներով է օրորում իրեն:

Առաջ, կրք դեռ ապաստան չէր գտել բանաստեղծը, մեզ վախեցնում էր իւր յուսահատութեամբ, յիշեցնելով անվերջ կերպով, որ ոչ ոք չունի աշխարհում, ամենքից կարուած և ամենքից զգուած է, բնութիւնն այդ ժամանակ նրա նախանձն էր շարժում իւր նորից նոր փթթուելու բնորոշակութեամբ, ատանջում էր նրան անցողիկ գոյութիւն ունենալուն համար: Բանաստեղծն իսկապէս այդ ժամանակ ապրում էր իւր զնորքի յոյզերը, որպէս սեպհական սչնչութեան և դրանից առաջացող վախերի արամադրութիւն: Հայրենի եղերքն իրրև ապաստան ապրումներով նա մի կրկրիմի հոգեկան վիճակի մէջ է ընկնում, մերթ կրգում է իւր անհուճութեան և յաւէրմի կրգը, որպէս արտայայտութեան ծարաւի յոյզերի, այսինքն սեպհական կատարելութեան, ինքնալրացման և անտանութեան ձգտումները, մերթ էլ ամփոփւում է հայրենի եղերքի մէջ՝ կրկնակապոյտ բարձունքները թողնելով և համակերպուելով իւր անցողիկ գոյութեան հետ կրկրի սահմաններում, այդ արամադրութիւնները արգասիք են հաշտութեան յոյզերի:

«Դէպի անտունը» Յովն. Թումանեանի ծարաւի յոյզերի զլուխ գործոցն է:



Յտեսանութեան և մահուան սարսափի չքացման, մենաւոր հոգու ազատագրման մի օրհներգ է «Դէպի անտունը»: Բայց հոգե-

բանական տեսակէտից քննելով այդ պօէմը, տեսնում ենք, թէ որքան դժուարութեամբ է ձեռք բերում մեր բանաստեղծը անմահութեան լաւատեսութիւնը: Հայրենի եղերքը հարեանցօրէն է շօշափուած այդտեղ, բանաստեղծը քիչ է մնում իւր մեծութեան երգերի նուազները հնչեցնի, սակայն նրան յետ է պահում ապրումների այն հիւսուածքը, որոնք յարատե կերպով յօրինուել են հայրենի եղերքի շրջանում: Հարկաւոր է փոքր ինչ պարզարանել մեր պնդումը:

Մեջշանական միջավայրի մէջ, ինչպէս տեսանք, Յովհ. Թումանեանը մենակ է դրում իրեն ամեն կողմից, տուն, ընտանիք, ընկեր ու բարեկամ խորթ են նրան, բոլորն էլ շնչում են այն ապականուած օդը, որից փախուտ է տալիս բանաստեղծը: Այդտեղ նա նմանում է թևերը կտրտուած թռչնի, որ անկարող է կեանքի փոթորկի դէմ խոչանալ՝ հզարա ու անսարսափ: Նա մենակ է, մենմենակ, ոչինչ չի կապում նրան կեանքի հետ:

Հայրենի եղերքը, ինչպէս տեսանք դարձեալ, մի բոլորովին հակառակ պատկեր է ներկայացնում: Այդտեղ տիրում է մի ուրիշ մթնոլորտ, բանաստեղծը շրջապատուած է համակիր մարդկանցով, ունի տուն էլ, տեղ էլ, ընկեր ու բարեկամներ նոյնպէս: Նրա թևերը-բնաւ. անկաշկանդ, սաւառնելու արամազրութիւնը—պայծառ և կեանքի փոթորիկը—չահարեկող:

Մինչդեռ մենութեան երգերում բանաստեղծն անտարբեր է դէպի այն կապերը, որոնցով նա օղակւում է կեանքի հետ, նրա համար բնաւ արժէք չունին այդ կապերի թուլանալն ու չքանալը, ընդհակառակը, նա ուրախ է որ այդ այդպէս է լինում, այն ինչ հայրենի եղերքի սահմաններում նա անհուն սիրով է ներշնչուած դէպի կեանքը և այն բոլորը, ինչ որ նպաստում է կեանքի յարատեութեանն ու փարթամութեանը:

«Դէպի անհունը» պօէմի մէջ բանաստեղծը կորցնում է իւր սիրածին, քիչ է մնում, որ նա այդ խորագին կորստից յետոյ սուղուի իւր մենութեան երգերի անյուսութեան մէջ, երգի կեանքի դատարկութիւնը ու աննպատակութիւնը, բայց նրան յետ է պահում մի ուժեղ ապրում—սիրածի հետ միանալու հնարաւորութեան խանդավառութիւնը՝ ներշնչուած մի համատուածեան լաւատեսութեամբ:

Այն չափով, ինչ չափով սիրածը բանաստեղծի հոգում տեղ ունի, նա շնչում է որպէս «մի հոգի երկու մարմնի մէջ»: Նա հետո է մենութեան սարսափներից, կեանքը բովանդակալի է և ապրելը նպատակաւոր: Բայց սիրածն օգնորում է և մահուանից յետոյ հիւսուելով բնութեան հետ՝ նա այցի կգայ ամենուրեք:

Ա՛խ, արի, ինչպէս աստղիկ հեռաւոր,

Ինչպէս թոյլ հնչիւն թևի և գեփիւսի,

Կամ թէկուզ ինչպէս տեսիլ ահաւոր,
 Ինձ համար մին է... արի, միայն, արի...

Այդ քառասոր, որ պատկանում է Պուշկինի գրչին, Յովհ. Թումանեանը թարգմանել է իւր հարազատ ապրումների արտա-
 յայտութիւնը գտնելով նրա մէջ: Մենք արդէն տեսանք թէ նա
 սովորաբար ինչպիսի գրուածքներ է թարգմանում և թէ որքան
 թարգմանածները համապատասխանում են նրա հոգու ելևէջներին:

Մենութեան երգերի մէջ նա սիրազուրկ է յայտարարում
 իրեն, ոչ մի քնքոյշ արարած նրա հոգու մէջ իբր թէ տեղ չունի,
 բայց մի սիազեղ հատուած Ֆիրգուսիից, որ թարգմանել է Թու-
 մանեանը, մերկացնում է նրա ներքին աշխարհը. նա ուզում յա-
 ւէրժանալ սիրոյ միջոցով.

Աուզէի հալուել, ձուլուել իմ երգին,
 Ու այս տողերում թաղնուել ծածուկ,
 Որ երբ կարգայիր մի օր, իմ անդին,
 Կարող լինէի անտես, կամացուկ,
 Ամեն հնչիւնի, ամեն խօսքի մէջ
 Դիպչել շուրթերիդ, համբուրել անվերջ...

Եւ իսկապէս հայրենի եզերքին, այսինքն խոհերով և ապրում-
 ներով հարազատ շրջապատին նուիրուած պօէմների մէջ Յովհ. Թու-
 մանեանին սէրը ներկայանում է իբրև մի կամուրջ, որ նրան կա-
 պում է անհունութեան և յաւէրժութեան հետ: Այդտեղ սէրը
 հանդէս է դալիս իբրև մի մեծ ամբողջի հետ ձուլող, մի խոշոր
 հաւաքական միութեան մէջ հալեցնող հոգեպարար զգացում: Նա
 դադարում է անասնական կիրք լինելուց և խօսեցնում է աստուած-
 ների բարբառով: Մենութեան երգերի մէջ, ասես թէ, սէրը հրա-
 պուրում է իւր դուռ մարմնական, անցողիկ թովչանքների կողմից
 և շուտով ձանձրացնում է բանաստեղծին՝ նրա հոգու մէջ գոյաց-
 նելով անյագ ծարաւի մի կիզիչ մտրուք: Ընդհակառակը, հայրենի
 եզերքի մթնոլորտը սէրը գուրգուրանքի առարկայ է դարձնում իւր
 հոգեկանի կողմից և այն էլ շեշտուն:

«Դէպի անհունը» պօէմի մէջ բանաստեղծը երգում է.
 Եւ ինչ է սիրոյ իմաստը վերին,
 Ի՞նչ երջանկութեան խորհուրդը խորին,—
 Հալուել, միանալ,
 Իրեն մոռանալ...

Այդ անէացումը մի անհուն էութեան մէջ շատ հետաքրքրա-
 կան ուղիով է քննարկում Յովհ. Թումանեանի մօտ: Ընտանիքը,
 որպէս հաւաքական ամբողջ և հայրենի եզերքի մի մասնիկը, այն
 սկիզբն է, որ տանում է դէպ անակիզրն անվերջը—դէպի անհունը,
 որ նոյնն է թէ անմահութիւնը: Այդ է պատճառը, որ մենք անմա-

հութեան հիմքը հաւաքական ամբողջի մէջ դրինք՝ մարդկայնօրէն անմահանալու մի այլ հնարաւորութիւն անկարելի համարելով: Ես կամ, որովհետեւ կան ինձպէսները—ահա այդ անմահութեան բանաձերս Բայց այնուամենայնիւ հաւաքական միութիւնը անհատականութիւն չէ վերջինս բնորոշ առանձնաշատութիւններով: Աւստի և ինքնավերադարձի հնարաւորութիւնը հաւաքականօրէն հնարաւոր լինելով, անհատականօրէն անհնարին է. կամ, եթէ ոգևորում է, ունի կրօնական խանդավառութեան կերպարանք: Անհատն անհետանում է, բայց մնում է մեծ ամբողջ, որպէս հաստատու աներկը յաւերժութիւն, որ անհատականի հետ համեմատուելով կերպարանք չունի, լուս է և անշարժ: Անշարժ, որովհետեւ անհատական շարժումի կղծականութիւնը չունի իւրա, որովհետեւ ամբողջը, որպէս այդպիսին՝ չի խօսում, այլ գործում է.

Եւ ինչ է մարդ, և ինչ իրեն կեանք.—
 Եղծական ձևեր, ձայներ, շարժումներ.
 Յաւերժականը չունի կերպարանք,
 Ես լուս է, անշարժ, հաստատ, աներկեր...

Սակայն այդ յաւերժականին բանաստեղծը հասնում է իւրայինների հետ միանալով և նրանց սրտերում համակիր արձագանք գանձելով: Եւ իդուր չէ, որ բանաստեղծի մէջ յաւերժանի ապրումները մի անհատական գոյութեան կղծումի դիպուածն է մնում: Իւր սիրած էակի հետ միանալով՝ նա բնութեան անմահութեան մէջ է հարում, ինքն ևս անմահանում:

Մենութեան երգերում պանդուխտ և տարադիր բանաստեղծը՝ տան, ընտանիքի կարօտն է երգում և գանում գրանց մէջ հոգեկան քաւականութիւն, բուժում մենութեան նուազներով հիւանդացած հոգին:

Տուն, տուն, դէպի տուն
 Թաչում եմ արթուն,
 Որպէս երազում:

Այդ տան լուսաւոր ջահը, սակայն հանդիլ է, բանաստեղծն իրեն գրում է մի լայնատարած մթութեան մէջ, որտեղ շչմիլ կարելի է խորունկ ցաւի աղղկեղութեան տակ.

Պատյտ է գալիս
 Աշխարհքը գլխիս,
 Երկինքը մթնում...

Մարդիկ, արեւից, աշխարհքից հեռի,
 Մի անտակ ձորում, սե՛ ու խոր ջրում
 Տարւում էի ևս, խնդրում, շարժարւում.

Բարձր էին ափերն, ողորկ ու զրժար,
 Մի թուփ չկար գէթ բռնելու համար.
 Չկար կենդանի ձայն, ըստէր, նշան,
 Որ կարենայի կանչել օգնութեան...

Այստեղից արդէն մի քայլ է մնում գէպի մենութեան երգերի տարտարօսը—կեանքի դատարկութեան և աննպատակութեան ապրումները: Բայց բանաստեղծը չի սայթաքում այդ տարտարօսն ընկնելու համար, որովհետև կորցրած հարազատին դռնում է և միանում նրա հետ՝ հոգու մենասրութիւնը յաղթահարելով: Սէրը փրկում է նրան էլ չի կարող բանաստեղծը համաձայնել այն մարդկանց հետ, որոնց համար մահը մի անվերադարձ կորուստ է, մեծ տիեզերքի մի մտերմական մասն է դարձել նրա սիրելին, մահը յաղթել է մահով: Իւր ներքին տրամադրութիւնը նա վերադրում է դադաղի մէջ գրած սիրածին.

Մէջտեղը ճերմակ դադաղը նրա,
 Գրրած սևաքօղ սեղանի վրայ,
 Ու նա դադաղում, ասես թէ քնած,
 Հարմնական ճերմակ շորով պճուած:
 Անփոյթ, անզգայ կեանքին ու մահուան,
 Իր դադաղն ածած վարդերի նման...

Բնութիւնը մահուան ու կեանքի դիտակցութիւնը չունի, այնտեղ մահուան ածիւնից կեանքն է ձլում տարերայնօրէն: Բնութեան մասնիկ դարձողը վարդերի նման փթթումին և թօշուամին անփոյթ և անզգայ պիտի լինի: Մահը յաղթում է մահուան անդիտակցութեամբ, աւելի ևս լաւ՝ մահու ժխտումով:

Այդ ժխտումի ամենակարճ ճանապարհն է սէրը— դերագոյն յոյզը, որ ստեղծել է ամեն ինչ «ոչնչից»: Բանաստեղծն այդ յոյզի ներշնչմամբ է իրեն համարում անմահութեան ժառանգորդ: Անմահութեան տենչը դասնում է կենսաբուռիս մի գործօն, երբ նա նպատակ ունի կեանքը, որպէս այդպիսին, և այս վերջինի դարգացումն ու յարատեւութիւնը: Եւ պէտք է խոստովանել, որ Յովհ. Թումանեանի ըմբռնած անմահութիւնն այդ գործօնն է դերն է կատարում նրա հոգեկան կեանքում. Մեր բանաստեղծը ճիգ է թափել և աշխատել է թեակոխել իւր մենութեան երկրի ապրումների շրջանը, բայց ազատագրել է իրեն՝ հոգու մի վսեմ թափով՝ հայրենի եզերքի փրկարար մթնոլորդն ընկնելով: Կրօնական բանաստեղծութեան էութիւնն է տալիս նա, երբ մի հակիրճ երկտողով մահուան խորհուրդն է բնորոշում:

Այս անցաւոր երկրի վրայ
 Այան օրերն պանդխտութեան...

Սակայն այդ ասորումը՝ լինելով խորապէս քրիստոնէական (Յովհ. Քուճանեացն էլ այդպէս ըմբռնելով է մէջ բերում «Հողեր երգերի» այդ երկատղը), չի ներգաշնակում, «Դէպի անհուն»-ի, մէջ արտայայտուած կենսալիր լաւատեսութեան հետ: Երկրամերժ վարդապետութեան ոգուն անշափ համապատասխան է հնչում հետեւեալ քառաստղը.

Դադազը շարժւեց, թնդաց անագին
Սասանիչ երգը մահուան սարսափի,
Այն լացն ու կոծը, օրհներգը մահի,
Որով մեռելին հրաժեշտ են տալիս...

Իւր մենութեան երգերի մէջ է, որ բանաստեղծը վախճանում է մահից, այն ինչ «Դէպի անհուն» իւրաքանչիւր երեսից բուրում է մի անսարսափ արհամարհանք դէպի մահը: Սիրածին թաղելուց յետոյ նա ասում է.

...Եւ կամ որն է նա, այն շողն է պայծառ,
Որ զւարթ խաղով, աշխոյժ ու կայտառ
Կորչում է մանում թուխ ամպի ետե,
Ազատ, երկնաշու այն ամպն է թեթև,
Թէ այն աղաւնին, որ հիմա թռաւ,
Անփոյթ ճախրելով՝ ջինջ օդում կորաւ...

Ճիշտ է, հարցական ձևի մէջ է արտայայտուել բանաստեղծի անմահութեան խանդավառութիւնը, բայց դա չպէտք է մոլորեցնի մեզ. ամբողջ պօէմը աստորուած է այդ օգով, թէպէտ և քրիստոնէական ըմբռնումները, ինչպէս երևում է՝ խորն են նստած բանաստեղծի հոգում, և նա երբեմն երբեմն ունկնդրում է իւր պօէմի մէջ և նրանց: Սակայն պէտք է խոստովանենք, որ նրա հայրենի եզերքի հողեկան արժէքներից մէկն է և քրիստոնէական աշխարհիմացութիւնը, երկիրը դասնում է անապատ, սւր պանդուխտները մի պարտականութիւն ունին միայն—չուել դէպի երկինք:

Փնփռ անապատում մխիթարչին,
Փնփռ խորհուրդին անմահութեան...

Ու լում եմ ես այն խաղաղ օդում
Քնքոյչ ու զւարթ ձայնը սիրելի,
Անյայտ ու անտես կանչում է նա ինձ,
Կանչում գերազանց մի ուրիշ կեանքի,

«Սրի ինձ հետ, իմ թշւառ,
Ես քեզ տանում մի աշխարհ,
Ուր չկայ մահ, անջատում,
Ուր սէրն անվերջ, անհատնում...»

Ինչպէս տեսնում էք, վերջին տողերը մի քրիստոնէական շեշտ են մտցնում պօէմի մէջ: Եւ շատ հասկանալի է այդ հանդամանքը: Յովն. Թումանեանը նահասկետական պայմանների մէջ ապրող գիւղացիութեան երգիչն է. իսկ այդ վերջինն ունի իւր որոշ աշխարհիմացութիւնը, որին և մատամբ հաւատարիմ է 'Մնացել բանաստեղծը՝ երկրիս վրայ անմահութիւնը ներքողելուց յետոյ՝ մի ուրիշ աշխարհ երազելով «ուր չկայ մահ»—քրիստոնէական հանդերձեալ կեանքը .

(շարունակելի)

Ա. Տէրտեաան



ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ

ՆՐԱ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(1840 — 1911).

Քիչ չէ նրանց թիւը, որոնք ծնւում և մեռնում են, բայց շատ քիչ են նրանք, որոնք մեռնելուց յետոյ էլ դեռ շարունակում են ապրել: Դրանց կեանքն ու գործունէութիւնն է, որ անմահ մնալով յետորդներին է անցնում որպէս անփոխարինելի և ամենաարժէքաւոր ժառանգութիւն: Այդպիսիների կեանքն է, որ դաւնում է հիմք և առաջնորդ գալիք սերնդի գործունէութեան համար: Ահա այդ քչերի թուին է պատկանում և հանդուցեալ Ղ. Աղայեանը, որն արդէն պատմութեան սեփականութիւն դարձած՝ այսուհետև դեռ էլի մնալու է մեզ համար որպէս ուսուցիչ—գաստիարակ: Մենք նրա մահուամբ թէև զրկուեցինք մի պատկառելի հօթանասնամեայ ծերունու շատ բան արտայայտող դէմք ու հասակ դիտելու հաճոյքից, զրկուեցինք մեզնից տասնեակ տարիներ առաջ կատարուած բազմաթիւ հասարակական—պատմական յիշատակարանների բնօրինակ տակաւինն առոյգ և աշխոյժ մնացած Աղայեանից, բայց այդ բոլորի յիշողութիւնն է, որ այսօր մնում է մեզ որպէս ամենաթակազին սեփականութիւն, այդ բոլորի իդէալական մարմնացումն է մեր մէջ, որ արագացնելու է մեր սրտերի բարախը, մեր յոյզերի ու զգացմունքների թափը, մեր մտքի թռիչքը, որոնք այնքան խիստ ու անզուսպ էին հանդուցեալի մէջ: Եւ այժմ այդ բազմաթիւ գանձերի աճեցման ու զարգացման ընդհատումն է, դր անկեղծօրէն, մանկան հոգու պարզութեամբ հանրօրէն սգում է՝ թէ՛ մամուլը, թէ՛ քաղաքը, թէ՛ գիւղը,